3350

բոլոր յերկրների, միացեք!

ԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

(Կոմունիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալի Սեկցիա)

Յերևան 1924.

Հրատարակություն ՀԿԿՄ Կենտկոմի

Պրոլետարներ բոլոր յեկրների, միացեք!

ЗКСМ
Հ-20
Ֆ 2001

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

(Կոմունիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալի Սեկցիա)

Հրատարակություն ՀԿՅԵՄ Կենտկոմի
Յերևան, 1924.

20934 ԱՀ

59253

Տպագրական տրեստի 2-րդ տպարան.
Տիրաժ 9000. Պատ. № 2508.

Ա. Միության անդամների ընդունելության ու արտաքսման մասին։

1. ՈՒՆԵՄ անդամ հաշվվում է 14—23 տարեկան հասակ ունեցող յուրաքանչյուրը, որ ընդունում է միության ծրագիրն ու կանոնադրությունը, աշխատում նրա կազմակերպություններից մեկում, յենթարկվում է միության բոլոր վորոշումներին ու վճարում անդամավճար։

Փանորություն. —23 տարեկան հասակ ունեցող միության անդամները կարող են մնալ կազմակերպության մեջ վորպես պասիվ անդամ։

ներ (այսինքն կունենան խորհրդակցական ձայնի իրավունք), ըստ վորում, յեթե պասիվ անդամը ընտրվում է դեկավար որգաններից մեկը, ստանում և վճռական ձայնի իրավունք։

2. ՈՒՅԵՄ անդամ ու թեկնածու ընդունման կարգը հետևյալն է.—

ա) Միության անդամ ընդունվում է բանվոր ու գյուղացի յերիտասարդությունը առանց թեկնածուական ստաժի ու յերաշխավորությունների։

բ) Միության թեկնածու ընդունվում են վոչ պրոլետարական ծագումն ունեցող ուսանողությունը (աշակերտությունը), ծառայողները։

գ) Թեկնածուների համար սահմանվում է մեկ տարվա թեկնածուական ստաժ։

դ) Թեկնածուներ ընդունվում են առնվազն յերկու տարվա ստաժ ունեցող ՈՒՅԵՄ կամ ՈՒԿՆ յերկու անդամների հանձնարարականներով։

Ծանոթություն 1.— Թեկնածուները յենթարկվում են միության բոլոր վորոշումներին, ստանում միության անդամների բոլոր պարտականությունները և ժողովներում ստանում խորհրդակցական ձայնի իրավունքով։

Ծանոթություն 2. — Յերաշխավորություն ավողները պատասխանատվություն յեն կրում իրենց յերաշխավորությունների համար. վերջիններիս անհիմն գտնվելու դեպքում յենթարկվում են միությունական պատասխանատվության, մինչև միությունից արտաքսում։

Ծանոթություն 3.—ՌԿՅԵՄ շարքերն անցնելու առթիվ դիմում ված ընկերների ցուցակը վորոշ ժամանակ փակցվում է ձեռնարկի կամ հիմնարկի աչքի ընկնող տեղը, վորի ընթացքում, այդ ընկերների նկատմամբ կարող են տրվել զանազան հայտարարություններ։

յե) Հանձնարարականների ստուգումը նախորդում է ընդունման, վոր կատարում է միության տեղական կոմիտեն։

զ) Միության անդամ ու թեկնածու ընդունելու հարցը նախապես քննվում է ըջիջում ու նրա միջնորդությամբ հաստատվում շրջանային (ռայոնական), իսկ գավառում՝ գավառային կոմիտեի կողմից։

3. Վորևե կազմակերպության յուրաքանչյուր անդամ, տեղափոխվելով այլ կազմակերպության շրջան, համարվում է նրա անդամը։

4. Միությունից արտաքսելը կարող է հետևել ՌԿՅԵՄ ծրագրի կամ կանոնադրության խախտման (միության դիսցիպլինան, միության անդամին անվայել վարքի համար)։

5. Արտաքսումը կատարում է կազմակերպության ներկայացուցչական ժողովը, շրջանային (ռայոնական), գավառային կամ նահանգական կոմիտեների առաջարկությամբ, ըստ վորում, արտաքսման մասին կայացած վորոշումները կարող են բողոքարկվել միության բարձր որգանները։

Ծանոթություն.—Առանց հարգելի պատճառների 3 անդամ ընդհա-

նուր ժողով չհաճախող կամ 3 ամսվա ընթացքում անդամավճար չը-մուծող անդամները մեքենայաբար դուրս են մնում միությունից առանց ներկայացուցչական ժողովի համաձայնության վորոշման։

6. Արտաքսված անդամների մասին, ժամանակին տեղեկացվում և նահանգական կոմիտեին ու հայտարարվում մամուլում։

Ռ. ՌԿՅԵՄ անդամների խնդիրները ու պարտականությունները։

7. Կոմյերիտական—դա յուրաքանչյուր յերիտասարդ բանվորի ու գյուղացու բարձր կոչումն է։ ՌԿՅԵՄ յուրաքանչյուր անդամ իր վարքով ու

աշխատանքով, ինչպես միության ներսը, այնպես ել միությունից դուրս պետք է արդարացնի այդ կոչումը, բարձր պահի ու արքությամբ պաշտպանի իր կազմակերպության ու կոմունիստական գրոշի պատիվը։

Բոլոր կոմյերիտականները պետք է հիշեն, վոր նրանք հանդիսանում են բանվոր դասակարգի ավանգարդ՝ Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության ապագա անդամները և պատրաստվում են այդ մեծ ու դժվարին պարտականությունը արժանի կերպով կատարելու։

8. Միշտ ու ամենուրեք, խորհրդային հանրապետության գործարաններում, կարմիր բանակում, գյուղական անտառության մեջ, պետական աշխատանքներում, կոմյերիտականը պետք է լի-

նի առաջիններից առաջինը՝ ամենաաշխատունակն ու յեռանդունը, ազնիվն ու համարձակը, վոր որինակ ծառայի մնացած յերիտասարդության ու ամբողջ աշխատավորության։

9. Ամենուրեք, ուր միայն հնարավոր է, կոմյերիտականը ոգնում է Խորհրդային Իշխանության ու Կոմունիստական Կուսակցության. նոր հասարակարգի կառուցման գործին նպաստելու համար, պայքարում է բուրժուազիայի ու կուլվածատերերի դեմ, կռվում է բուրժուական ազդեցության, խորհրդային որենքների խախտման, ժողովրդական գույքի հափշտակման, կաշառակերության ու ձրիակերության դեմ։

10. Ամեն մի կոմյերիտական պետք է լավ իմանա իր միության ծրագիրն

ու կանոնադրությունը, հասկանա բանվոր դասակարգի, նրա խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության խնդիրները, տեղյակ լինի հանրապետության մեջ ու ամբողջ աշխարհում կատարվող յերևույթներին ու այդ բոլորի մասին պատմի անկուսակցական յերիտասարդության և ամբողջ աշխատավորության։

11. Ամեն մի կոմյերիտական ակտիվ մասնակցում է իր միությանական ամբողջ աշխատանքներին ու պայքարին, կանոնավոր հաճախում է նրա ժողովներն ու ակումբները, ձգտում է կոմունիստական շինարարության համար անհրաժեշտ գիտելիքներից վորքան կարելի յե շատ ստանալ, ակտիվ մասնակցում է միության ու կուսակցության քաղաքական կամպանիաներին,

նպաստում է յերիտասարդության կրթության ու աշխատանքի նոր ձևերի շինարարության գործին։

12. Աշխատավարձով աշխատող յուրաքանչյուր կոմյերիտական պետք է իր արհմիության անդամը լինի։

13. Յուրաքանչյուր կոմյերիտական պարապում է մարմնակրթությամբ ու ֆիզիկական կուլտուրայով, հիշելով, որ բանվոր դասակարգին անհրաժեշտ են ֆիզիկապես ուժեղ, առողջ աշխատավորներ ու կոմունիզմի մարտիկներ։

14. Յուրաքանչյուր կոմյերիտական կրում է Կոմունիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալի նշանը, հիշելով, որ ինքը հանդիսանում է յերիտասարդ պրոլետարների միջազգային խոշոր բանակի անդամը։

Գ. ՌԿՅԵՄ կազմակերպչական կառուցվածքի մասին։

15. ՌԿՅԵՄ կառուցվում է դեմոկրատական կենտրոնացման հիմունքներով, ըստ արտադրական տերիտորիալ հատկանիշի։ Վորևե շրջան սպասարկող կազմակերպություն, համարվում է բարձրը տվյալ շրջանի մասերը սպասարկող մյուս բոլոր կազմակերպություններից։ ՌԿՅԵՄ ղեկավար մարմինները ընտրովի յեն և իրենց աշխատանքների համար հաշվետու ընտրող որգաններին։ Ստորին որգանների յենթարկվում են բարձր որգանները բոլոր վորոշումներին։

16. Յուրաքանչյուր կազմակերպության բարձր որգանը հանդիսանում է ընդհանուր ժողովը, իսկ արդյունաբե-

բական կամ խոշոր կենտրոններում կոնֆերանսը կամ համագումարը։

17. Ընդհանուր կամ ներկայացուցչական ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը ընտրում և կոմիտե, վոր հանդիսանում և գործադիր մարմին ու ղեկավարում տեղական կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը։

18. Միության աշխատանքի առանձին բնագավառների հատուկ ձևերի համար կոմիտեները զատում են համապատասխան բաժիններ, կոմիսիաներ, բյուրոներ (քաղաքա-լուսավորական, տնտեսական, կազմակերպչական և ազգային փոքրամասնության աշխատանքների)։ Բաժիններն ու կոմիսիաները յենթարկվում են կոմիտեին, հանդիսանում են նրա ժամանակիչ որգանը, կիրառում են նրա ովոշումները և չունեն իրենց հատուկ ապարատը։

Դ. Բջիջների մասին։

19. Վոչ պակաս 3 միության անդամ ունեցող բջիջը հաստատվում և գավառային կամ շրջանային (բայոնական) կոմիտեի կողմից։

20. Բջիջը հանդիսանում և միության հիմնական կազմակերպությունը ու կապում և նրան բանվորագյուղացիական յերիտասարդության լայն մասսաներին։ Բջիջը կազմակերպվում և ձևնարկին, հիմնարկին, գործարանային գպրոցին կից, գյուղում, գպրոցներում և արհմիություններին կից անչափահաս արհեստավորներից։ Բջիջի անելիքներն են՝

ա) Ամեն կերպ նպաստել ավյալ ձեռնարկի, գյուղի կամ գպրոցի ՈԿՅԵՄ անդամների շաղկապման։

բ) Ուժեղացնել ու տարածել ՈԿՅԵՄ ազդեցությունը միությունից դուրս գտնվող յերիտասարդության վրա.

գ) Նոր անդամներ գրավել.

դ) Ակտիվ մասնակցել ձեռնարկի, գյուղի, գպրոցի ամբողջ կյանքին ու շինարարության.

յե) Աշխատել ձեռնարկի յերիտասարդ բանվորության նյութական դրությունը բարելավել։

զ) Իր անդամների մեջ քաղաքա-լուսավորական աշխատանք տանել.

է) Մասնակցել միության, կուսակցության ու խորհրդային իշխանության քաղաքական կամպանիաներին.

ը) Ոգնել միության զեկավար որ-

գաններին նրանց ամբողջ աշխատանքներում։

21. Բջիջի զեկավար աշխատանքը տանելու համար 3 ամիս ժամանակով ընտրվում է 3 հոգուց բաղկացած բյուրո։

22. Բջիջը իր աշխատանքների համար, վոչ պակաս 2 շաբաթը մի անգամ հաշիվ է տալիս շրջկոմին (բայկոմին)։

ՅԵ. Քարկցիաները։

23. Նախաձեռնների հրապարակներում, նրանց ակումբներում, յերեկոյան դպրոցներում, ընտֆակներում ու տեխնիքական դասընթացներում և այլն, յեթե կա յերեք հոգուց վոչ պակաս միության անդամ, կազմակերպվում է ՈԿՅԵՄ ֆրակցիա։

ՀՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԳՈՍ.ՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄՈՍԿՎԱ
ՀՍՍՀ ԳՊԵՏ

Ֆրակցիան ունի իր խնդիրները-նա պետք է ավյալ հիմնարկի անկուսակցական յերիտասարդության մեջ քաղաքա-լուսավորական աշխատանքներ տանի, ապահովի այնտեղ միության ազդեցությունը, դիսցիպլինա սահմանելու, հրապարակների, ակումբների ու այլ աշխատանքների ճիշտ կազմակերպման գործում մնացած ամբողջ յերիտասարդության համար որինակ ծառայի։

24. ՌԿՅԵՄ Ֆրակցիան իրավունք չունի նոր անդամներ ընդունի ու ներկայացուցչական ժողովների, կոնֆերանսների համար պատգամավորներ ընտրի։

25. Ֆրակցիայի բոլոր անդամները անպայման պետք է ըջիջի անդամներ լինեն։

26. Տեղական ամբողջ աշխատանքների գործադիր մարմինը հանդիսանում է բյուրոն կամ քարտուղարը, որ ընտրվում է ֆրակցիայի ընդհանուր ժողովում ու հաշվետու է նրան։

Զ. Շրջանային (ռայոնական) կազմակերպության մասին։

27. Միության բոլոր ըջիջները, որոնք գտնվում են շրջանի սահմաններում (նահանգական, գավառական քաղաքներում) ու իրենց ներկայացուցչական կամ ընդհանուր ժողովներում ընտրում են կոմիտեներ, կազմում են միության շրջանային (ռայոնական) կազմակերպությունը։

28. Ընդհանուր, իսկ արդյունաբերական ու խոշոր կենտրոններում

ներկայացուցչական ժողովը համար-
վում է բարձր զեկավար որդանը շրջանի սահմաններում։ Ներկայացուցչական և ընդհանուր ժողովները քննում են ինչպես տեղական կազմակերպության վերաբերող, այնպես էլ բարձր զեկավար որդանների կողմից առաջադրված միութենական խնդիրներ։ Լսում են բարձր զեկավար որդանների զեկուցումները այլ և ընթացիկ քաղաքական կյանքի ու խորհրդային շինարարության ընդհանուր հարցեր, ընտրում են կոմիտե, լսում ու հաստատում են հաշվետվությունը, կոմիսիաների աշխատանքների ծրագիրն և ուղղություն տալիս բջիջների աշխատանքներին։

29. Կոմիտեն ընտրվում է ընդհանուր, իսկ արդյունաբերական ու խոշոր

կենտրոններում ներկայացուցչական ժողովում վոչ ավել քան վեց ամիս ժամանակով։

Ե. Նահանգական ու գավառական կազմակերպությունների մասին։

30. Նահանգական ու գավառային կոնֆերանսներ հրավիրվում են վեց ամիսը մեկ անգամ։

Փաճորություն. — Նահանգական կոմիտեի վորոշմամբ, կամ գավկոմների $^1/_3$ պահանջով, կարող են հրավիրվել արտակարգ նահանգական կոնֆերանսներ, այլ և գավառային՝ գավկոմի վորոշմամբ կամ գավառի բջիջների $^1/_3$ պահանջով։

31. Նահանգական և գավառային կոնֆերանսները լսում ու հաստատում են կոմիտեների և վերատուգիչ հանձնաժողովների հաշվետվությունները, քննում են յերիտ շարժման հարցեր, ընտրում կոմիտեներ ու վերատուգիչ հանձնաժողովներ։

32. Գավառային կոնֆերանսները քննում են նահանգական կոնֆերանսների որակարգը և ընտրում պատգամավորներ։ Նահանգական կոնֆերանսները պատրաստում են համառուսական համագումարի հարցերը և ընտրում պատգամավորներ։

33. Նահանգական կոմիտեն ընտրվում է նահանգական կոնֆերանսում, քանակով 11—15 հոգի, գավառայինները՝ 7—11 հոգի գավկոնֆերանսներում և հանդիսանում են զեկավար

որգանները համագումարների ժամանակամիջոցում։

34. Նահանգական կոմիտեյի պարտականությունն է զեկավարել և հրահանգել գավառային կոմիտեներին և տեղական կազմակերպություններին, կիրառել կյանքում համառուսական համագումարի վորոշումները, նահանգական կազմակերպությունների ու հիմնարկների միջև միության ներկայացուցչություն սահմանելու մասին ու հաստատել նոր ստեղծվող կազմակերպությունները։

35. Գավառային կոմիտեների պարտականությունն է ոգնել տեղական կազմակերպությունների աշխատանքներին, ստեղծել և հաստատել նոր կազմակերպություններ, հրահանգել և ձևավորել գոյություն ունեցողները,

ուղղություն տալ նրանց աշխատանքներին, ներկայացուցչություն սահմանել գավառային կազմակերպություններում և հիմարկներում։

36. Կոմիտեի վարչության իրագործման ու առորյա աշխատանքների ղեկավարման համար նահանգական ու գավառային կոմիտեներն իրենց կազմից ընտրում են հինգ հոգուց բաղկացած բյուրո։

37. Նահանգական ու գավառային կոմիտեների քարտուղարների համար սահմանվում է վարձ միութենական ու կուսակցական ստաժ. նահկոմների ինտելիգենտ քարտուղարների համար 3 տարվա միութենական, 2 տարվա կուսակցական ստաժ. գյուղացիների համար՝ 2 տարվա միութենական ու կուսակցական ստաժ, բանվորների համար՝ 2 տարրա միութենական, 1 տարվա կուսակցական ստաժ։ Գավառների ինտելիգենտ քարտուղարների համար 2 տարվա ՌԿՅԵՄ, 1 տարվա կուսստաժ. բանվորների համար 1 տարվա միութենական ստաժ. գյուղացիների համար 1 տարվա միութենական, 1 տարվա կուսստաժ։ Զքավոր գյուղացիական միջավայրից դուրս յեկած քարտուղարների ստաժը հավասարվում է բանվորների ստաժին։

38. Ռ. Ս. Խ. Հ. Ֆեդերատիվ մասերի տերիտորիան սպասարկող միության կազմակերպությունները, հավասարվում են շրջանային միություններին և իրենց աշխատանքների ընթացքում յենթարկվում են ՌԿՅԵՄ Կենտկոմին։

39. Շրջանային (областной) կոմիտեն կամ ազգային յերիտասարդական

միութեան կենտրոնն ընտրվում և շրջանային կոնֆերանսում (կամ ավելի ազգային միութեան համագումարում)։

40. Կենտրոնական կոմիտեի հատուկ վորոշմամբ ստեղծվում են շրջանային բյուրոներ, նշանակվում ՈՒՅԵՄ կենտրոնի կողմից և յուրաքանչյուր առանձին դեպքում նրա սահմանած կազմով։ Շրջանային բյուրոները պատասխանատու են միմիայն կենտրոնի առաջ։

Ը. Միութեան կենտրոնական մարմինների մասին։

41. ՈՒՅԵՄ բարձր դեկավար որգանը հանդիսանում է Համառուսական համագումարը, վոր հրավիրում է կենտրոնական կոմիտեն վոչ սակավ տարին մի անգամ։

Ծանոթություն.—Արտակարգ համագումարներ կարող են հրավիրվել նա և կոմիտեների 1/3 պահանջով կամ կենտրոնի վորոշմամբ։

42. Համագումարը լսում ու հաստատում է կենտրոնական կոմիտեի հաշվետվությունները, հաստատում է միութեան ծրագիրն ու կանոնադրությունը, ընդգծում և շարժման ընդհանուր գիծը, լուծում է նրա հերթական խնդիրներն և ընտրում կենտրոնական կոմիտե։

43. Համառուսական համագումարների ժամանակամիջոցում միութեան բարձր որգանը հանդիսանում է Կենտրոնական Կոմիտեն։

44. Կենտրոնական կոմիտեն ընտրվում է համագումարի կողմից սահմանած կազմով։ Կենտրոնական կոմի-

տեղի անդամի հեռանալու դեպքում, նրա կազմը լրացվում և համագումարում ընտրված թեկնածուներից, նրա սահմանած կարգով։

45. Կենտրոնական կոմիտեն ուղղություն և տալիս միության ամբողջ աշխատանքներին, ներկայացնում և ՈԿՅԵՄ համապետական հիմնարկներում ու կազմակերպություններում, հրատարակում և միության կենտրոնական օրգանը։

46. Կենտրոնական Կոմիտեն պատրաստում և Համառուսական Համագումարը, սահմանում և ներկայացուցչական նորմաները, նախագծում և համագումարի օրակարգը։

47. Վոչ հաճախ 2 ամիսը մի անգամ հրավիրվում և կենտրոնական կոմիտեի պլենար (լրիվ) նիստը։

48. Տեղերի հետ կապվելու և աշխատանքի հերթական խնդիրների քննության համար, վեց ամիսը մի անգամ կենտրոնական կոմիտեն հրավիրում և ՈԿՅԵՄ Համառուսական կոնֆերանս նահանգական կոմիտեների ներկայացուցիչներից։

49. Յուրաքանչյուր ամիսը մի անգամ կենտրոնական Կոմիտեն ուղարկում և նահանգական կոմիտեներին իր գործունեության հաշվետվությունը, գնում և ինֆորմացիոն զեկուցումները նահանգական կոնֆերանսներին և մամուլում լուսաբանում իր աշխատանքը։

Թ. Միության ու կուսակցության փոխհարաբերությունները։

50. Ամբողջ միությունը կուսակցության կողմից զեկավարելու նպատա-

կով ՌԿՅԵՄ Կենտկոմը անմիջապես յենթարկվում է ՌԿԿ կենտկոմին։ Ռ. Կ. ՅԵ. Մ. տեղական կազմակերպությունները աշխատում են ՌԿԿ համապատասխան նահանգային, շրջանային, գավառային կազմակերպությունների հսկողության տակ։ ՌԿԿ հետ կապ հաստատելու համար, ՌԿՅԵՄ որդանները ներկայացուցիչներ են ուղարկում են ՌԿԿ (բ) համապատասխան մարմինները։

Ժ. Միության ու պետական որգանների փոխհարաբերությունները։

51. Կապ ու կոնտակտ հաստատելու համար, միությունը ուղարկում է իր ներկայացուցիչներին աշխատանքի

պաշտպանության, լուսավորության բաժինները, արհմիությունները և իրենց աշխատանքի բնույթով յերիտասարդության շահերը շոշափող հիմնարկները։

52. Խորհրդային հիմնարկներ ուղղված միության ներկայացուցիչները իրենց աշխատանքների համար հաշվետու են ուղարկող կազմակերպություններին։

Ի. Դրամական միջոցները։

53. Դրամական միջոցները կազմվում են անդամավճարներից, զեղջումներից, նյութական ոժանդակություններից և այլ յեկամուտներից։

54. Անդամավճարը պարտադիր է ու սահմանվում է ամսական աշխատարձի 1/2 տոկոսի չափով։

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ

Թանորություն. 1. *Յեթե անհնար է սահմանել տոկոսային վճար, ապա նրա քանակը սահմանում է դավառային կոմիտեն ու հաստատվում նահանգական կոմիտեյում։*

Թանորություն 2. *Անգործներն ու կարմիր բանակայինները ազատվում են անդամավճարից։*

2013
ՀՀ Ազգային գրադարան
ԴԴՏ NL0036721

2010

ВКСМ
Z-20